**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**հրավերում փոփոխություններ կատարելու մասին**

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2025 թվականի օգոստոսի 1-ի թիվ 2 արձանագրությամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-25/45**

Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կարիքների համար միջոցառումների կազմակերպման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԲԿԳԿ-ԷԱՃԾՁԲ-25/45 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերում կատարված փոփոխության պատճառները և կատարված փոփոխությունների համառոտ նկարագրությունը՝

**Փոփոխության առաջացման պատճառ N 1:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով գեներացված հրավերի տեքստով ներկայացված ծառայության տեխնիկական բնութագրում անհրաժեշտություն է առաջացել փոփոխություն կատարելու, մասնավորապես՝ «…Նվազագույնը 6 տարվա փորձ՝ նմանատիպ բնույթի և ծավալի միջոցառումների կազմակերպման ոլորտում՝ որպես գլխավոր կատարող (վերջին 3 տարիների ընթացքում առնվազն 20 նմանատիպ պայմանագիր)..»-ն անհրաժեշտ է ներկայացնել նոր խմբագրությամբ:

**Փոփոխության նկարագրություն:** Էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով հրավերով ներկայացված ծառայության նկարագիրը շարադրվել է նոր խմբագրությամբ, հետևյալ կերպ.
«…Նվազագույնը 5 տարվա փորձ՝ նմանատիպ բնույթի և ծավալի միջոցառումների կազմակերպման ոլորտում՝ որպես գլխավոր կատարող (նվազագույնը 6-7 նմանատիպ բովանդակությամբ և ծավալով պայմանագիր, որոնց հանրագումարը պետք է լինի նվազագույնը 350մլն ՀՀԴ…)»:
**Փոփոխության հիմնավորում:** «Գնումների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Առաքելյանին:

Հեռախոս՝ +374 98 389 689 (ներքին հեռախոսահամար՝ 05)
Էլ. փոստ՝ a.arakelyan@promotion.am
Պատվիրատու՝ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի